Հաստատում եմ՝
՛՛Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ՛՛ ՍՊԸ
Հիմնադիրների խորհրդի նախագահ,

«------------» ------------------------ 2022թ.

Կ Ա Ր Գ

«ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՍՊԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉՄԱՆ

1. «Մեհրաբյանի անվ. բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողի ուսման վարձի զեղչման կարգը սահմանվում է «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ կանոնադրությամբ և սույն կարգով:
2. Ուսանողական զեղչը Քոլեջի բյուջեի ծախսային մասում նախատեսված ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ուսանողի ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցումն է:
3. Ըստ Քոլեջի մասնագիտությունների՝ Քոլեջի կողմից հատկացված ուսման վճարի փոխհատուցման ուսանողական զեղչերի քանակն անփոփոխ է:
4. Ուսման վճարի մինչև 30% չափով զեղչ Քոլեջի կողմից տրամադրվում է.
   - 4.1. առաջին կարգի հաշմանդամ ուսանողներին,
   - 4.2. երկկողմանի ծնողազուրկ ուսանողներին,
   - 4.3. այն ուսանողներին, որոնց ծնողներից որևէ մեկը աշխատում է Քոլեջում:
5. Սույն կանոնակարգի 4-րդ կետով նշված անձանց ուսման վարձի զեղչի ներկայացված փաստաթղթերի առկայության դեպքում ձևակերպվում և տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և պարտադիր կարգով վերանայվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:
6. Մեհրաբյանի անվ. բժշկական մոլեջը, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, ուսման վճարը զեղչում է հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց (սահմանված կարգով վավերացված համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում):
   - 6.1. սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների), երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների ուսանողները զեղչվում են ուսման վարձի 20%-ի չափով,
   - 6.2. միակողմ ծնողազուրկ ուսանողները՝ 15%,
   - 6.3. երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողները 15%,
   - 6.4. ԼՂ պատերազմի մասնակցի երեխաները՝ 10%, զոհված ազատամարտիկի երեխաները՝ 20%,
   - 6.5. մինչև երկու տարեկան երեխա ունեցող ուսանողները՝ 15%,
7. Սույն կարգի համաձայն ուսանողական բոլոր տեսակի զեղչերից օգտվելու համար դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 25-ից մինչև

սեպտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում: Դիմումների քննարկումը կազմակերպվում է ընդունող հանձնաժողովի կողմից: Դիմումների ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո քննական կամ ստուգարքային պարտքեր ունեցող ուսանողների դիմումները ենթական չեն քննարկման:

8. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ) ուսումնառությունն ընդհատած ուսանողի վերականգնման դեպքում պահպանվում է նախկինում ունեցած ուսման վարձի զեղչման իրավունքը: Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում: